ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

ԵՄ-ն երիտասարդների համար՝ Համակարգում եւ քաղաքականությանն աջակցություն

Իրականացման ժամանակահատված: 24.11.2023 - 24.05.2026

ԱԼԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 2 447 500

Ընդհանուր բյուջե: € 2 447 500

Իրականացնող կազմակերպություն(ներ):

EY, GOPA Worldwide Consultants

Նախագծի նկարագրություն:

«ԵՄ-ն երիտասարդների համար՝ Համակարգում եւ քաղաքականությանն աջակցություն» (EU4Youth Coordination and Policy Support) ծրագիրը կշարունակի աջակցել ԱԼԳ տարածաշրջանում երիտասարդությանն ուղղված ԵՄ գործունեությանը: Աշխատանքային ուղղությունները տարբեր են՝ երիտասարդական քաղաքականության ոլորտում ռազմավարական գործընկերության ամրապնդումից եւ ԵՄ աջակցության ընդլայնումից մինչեւ «ԵՄ-ն երիտասարդների համար» (EU4Youth) ծրագրի ընդհանուր առաջընթացի մոնիտորինգ եւ տարածաշրջանում ԵՄ կողմից ֆինանսավորվող երիտասարդական նախաձեռնությունների հաջողության մասին իրազեկում:

Ակնկալվող արդյունքներ:

1. Տարածաշրջանային/ «EU4Youth» ծրագրի եւ երկրների մակարդակներում գործում են համակարգման մեխանիզմներ՝ աջակցելու EU4Youth-ի տարբեր նախագծերի միջեւ համագործակցությանը, շփումներին եւ գիտելիքների փոխանակմանը, իսկ տարածաշրջանային բազմափուլ «EU4Youth» ծրագրի ռազմավարական զարգացման աջակցությունը համահունչ է Եվրոպական հանձնաժողովի Հարեւանության եւ ընդլայնման բանակցությունների հարցերով գլխավոր տնօրինության (DG NEAR) քաղաքական առաջնահերթություններին:
2. EU4Youth-ի արդյունքների շրջանակը շարունակում է զարգանալ իրականացնող գործընկերների հետ սերտ համագործակցությամբ, եւ իրականացվում է գործունեության հետ կապված արդյունքների մոնիտորինգ՝ տվյալների հավաքագրման եւ վերլուծության միջոցով (ներառյալ վերջնական շահառուների շրջանում հարցումները):
3. «EU4Youth» ծրագրի շրջանակներում հաղորդակցումն իրականացվում է արտաքին գործողությունների հաղորդակցման եւ տեսանելիության բարձրացման ուղեցույցի համաձայն (ներառյալ EU4Youth-ի տարեկան ձեռքբերումների զեկույցը եւ ծրագրային ակնարկները), ամենամյա EU4Youth-ի օրերի կազմակերպման եւ գիտելիքի փոխանակման այլ միջոցառումների միջոցով:
4. DG NEAR-ի եւ ԵՄ պատվիրակության երիտասարդական կենտրոնները պարբերաբար ստանում են համապատասխան քաղաքականության ոլորտում զարգացումների վերաբերյալ թարմ տեղեկատվություն եւ վերլուծություն, իսկ գործընկեր երկրներին տրամադրվում է կարողությունների զարգացման աջակցություն՝